

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	5

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

12

2.1 Ծրագրեր և կատարողականություն-----	12
2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	13
2.3 Միջազգային համագործակցություն -----	13
2.4 Ուսուցում, մրցույթ -----	14
2.5 ՀՀ ԿՀ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքերում կատարվող փոփոխություններ --	14
2.6 ՀՀ ԿՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	16
2.7 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ -----	18

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 | Օրենքներ

Փաստաթուղթ	«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 փետրվարի 2012թ, ՀՕ-29-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 17 (891), 28.03.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հողի հարկից ազատվում են օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների

համար օգտագործվող հողերը՝ փոխադարձության սկզբունքով, ՀՀ արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի միջնորդության հիման վրա:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի 2012թ, ՀՕ-60-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (894), 18.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ Ելեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացրած հաշվետվությունները կազմվում են գործող իրավական ակտերով սահմանված ձևերին և դրանց լրացման պահանջներին համապատասխան՝ այդ թվում՝ կնքելու պահանջները, և ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ որ հարկային մարմ-

նի կողմից հաստատված ձևաչափին համապատասխան թղթային կրիչի վրա անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված հարկային մարմին առձեռն ներկայացվող հաշվետվությունը: Կնքով ամրագրվելու պահանջը հանվել է Ելեկտրոնային եղանակով և փոստի միջոցով հարկային մարմին հաշվետվություններ ներկայացնելու դեպքում:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի 2012թ, ՀՕ-89-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (894), 18.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում են գիտահետազոտական և հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման աշխատանքները, ինչպես և 2012 թվականի հունվարի 1-ից հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության

բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ճանաչված, երաշխավորված և ՀՀ կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթները, մրցաշարերը, օլիմպիադաներ՝ իրնեց մասնակցության վճարի մասով:

Փաստաթուղթ	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 մարտի 2012թ, ՀՕ-94-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (894), 18.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավո-

րություններ չեն կարող առաջանալ, եթե խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:

Փաստաթուղթ	«Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 մարտի 2012թ, ՀՕ-95-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (894), 18.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել հողի հարկի գծով արտոնություններ: Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար հողի հարկի գծով համայնքի բյուջեում հաստատված Եկամուտների 10 տոկոսը:

Համայնքի ավագանու կողմից հողի հարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց ՀՀ պետական բյուջեից

համայնքի բյուջեին լրացուցիչ դուտացիաներ չեն տրամադրվում: Օրենքով կարող են սահմանվել հողի հարկի գծով այլ արտոնություններ:

Սահմանվում է, որ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հողի հարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում հողի հարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	21 մարտի 2012թ, ՀՕ-96-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (894), 18.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարիվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:



1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 27-ի N 887 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19 ապրիլի 2012թ, N 543-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 25 (899), 16.05.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ մաքսային տարածքով տարանցվող ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը «տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմով հրականացվում է մաքսային ապահովումների կիրառմամբ՝ առանց պարտադիր մաքսային ուղեկցման՝ բացառությամբ տարանցվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վրա մաքսային ապահովումների կիրառման անհնարինության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի:

Որոշման մեջ կատարված լրացմամբ սահմանվում է, որ հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագիրը, մաքսային

հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները մաքսային մարմին ներկայացվելուց և ընդունվելուց հետո մաքսային ծնակերպումներն իրականացվում են առավելագույնը երեք ժամկա ընթացքում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ուժը կորցրած է ճանաչվել վերոնշյալ որոշման 24-րդ կետը, որով սահմանվում էր.

«Եթե տարանցման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցի վրա հնարավոր է դնել մաքսային ապահովումներ, ապա բեռը վերջին միջանկյալ մաքսատուն հասցելուց հետո պարտադիր մաքսային ուղեկցումը դադարեցվում է»:

1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի N1-05/05-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	08 փետրվարի 2012թ. N 33-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (422), 02.04.2012թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ են կատարվում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՊԾ պետի 30.05.2005թ. «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 1-05/05-Ն հրամանում, որոնց համաձայն սահմանվում է, որ գործատուների մոտ (անկախ հարկման կարգերից) աշխատանքային պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների համար վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում են հետևյալ չափերով.

մինչև 2000,0 հազ. դրամ՝ 3%

2000,0 հազ. դրամից ավելի՝ 60,0 հազ. դրամ գումարած 2000,0 հազ. դրամը գերազացող գումարի 8%-ը, որոնց պահումները կատարում և պետական բյուջե են փոխանցում գործատուները:

Սահմանվում է նաև, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին

գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի (աշխատանքային կամ քաղաքացիական) բացակայության) փաստը ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է պարտադիր սոցիալական ապահովության վճար հետևյալ չափերով.

1-3 չձևակերպված աշխատողների դեպքում՝ 60,0 հազ. դրամ

4-6 չձևակերպված աշխատողների դեպքում՝ 150,0 հազ. դրամ

7-9 չձևակերպված աշխատողների դեպքում՝ 300,0 հազ. դրամ

10 և ավելի չձևակերպված աշխատողների դեպքում՝ 600,0 հազ. դրամ,

որոնք արտացոլվում են տվյալ ամիսը ներառող հաշվետվությունում:

Եթե աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը վերաբերում է 2012թ. հունվարի 1-ին և այսուհետո հաշվետու ժամանակաշրջաններին, սակայն իսկաման փաստն արձանագրվում է 2012թ. հունվարի 1-ից հետո, և այդ (չձևակերպված) վարձու աշխատողը այդ ժամկետից հետո չի աշխատում (չի աշխատել) տվյալ գործատուի մոտ, ապա գործատուն տվյալ (արձանագրման) ամսում հաշվարկում և վճարում է այդ (չձևակերպված) աշխատողի համար սոցիալական վճար 60,0 հազ. դրամի չափով (անկախ չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակից), որն



արտացոլվում է տվյալ ամիսը ներառող հաշվետվությունում:

Սահմանվում է, որ անհատ ձեռնարկատերը և նոտարները հաշվետու տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և ամսական նվազագույն սոցիալական վճարների հանրագումարի դրական տարբերությունը պետական բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաջորդ տարվա մայիս:

սի 1-ը (ներառյալ) (նախկինում մարտի 1-ը), անհատ ձեռնարկատերերը և նոտարները հաշվետու տարվա արդյունքներով, մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը (նախկինում՝ մարտի 1-ը), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերոնշյալ իրահանգի հավելված 4-ով սահմանված ձևով տարեկան եկամուտների մասին հայտարարագիր:

Փաստաթուղթ	«Դրամական (փողային) շահումների արտարժույթով գովազդման և տրամադրման, խաղաղույթների (գրագների) արտարժույթով իրականացման վերաբերյալ» ՀՀ ԿՍ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատր Ա. Աֆրիկյանի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	12 հունվարի 2012թ, N 1
Նրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (422), 02.04.2012թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ կարգավորվում են «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ տարածքում դրամական (փողային) շահումները կարող են գովազդվել և տրվել միայն ՀՀ դրամով) հետ կապված հարցերը: Մանավորապես, նշվում է, որ.

1. | Վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար կարևոր է, որ դրամական (փողային) շահումները գովազդվեն կամ տրամադրվեն ՀՀ տարածքում: Այս տեսանկյունից ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) փողային շահումների արտարժույթով գովազդելը չի դիտվում որպես օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, եթե գովազդի մեջ միաժամանակ նշվում է դրամային համարժեքը:

2. | Եթե ՀՀ տարածքում չգտնվող հաշվից դրամական (փողային) շահումները փոխանցվում են ՀՀ տարածքում չգտնվող համակարգերի միջոցով, ապա այդ ընթացակարգերով վճարումները չեն համարվում ՀՀ տարածքում կատարված:

3. | Խաղաղորույթների (գրագների) արտարժույթով իրականացման դեպքում չեն կիրառվում Օրենքի 6-րդ (ՀՀ արժույթով գործարքների իրականացումը ՀՀ-ում) և 7-րդ

(ՀՀ-ում արտարժույթով գործարքների իրականացումը) հոդվածներով նախատեսված սահմանափակումները:

4. | Վերոնշյալ պաշտոնական պարզաբանումը վերաբերում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ինտերնետ տուտալիզատորների կազմակերպիչների կողմից խաղաղույթների (գրագների) և դրամական (փողային) շահումների իրականացմանը, ինչպես նաև ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) նրանց կողմից կազմակեավող ինտերնետ տուտալիզատորներին վերաբերող փողային շահումները գովազդելուն:



Փաստաթուղթ	«Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների կիրառության վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	27 փետրվարի 2012թ, N 8
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (422), 02.04.2012թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ՝

1. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով (Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները) սահմանված առավելագույն չափերը՝

1) չեն կիրառվում ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում և (կամ) աշխատանքների կատարում չհամարվող գործարքների (մասնավորապես, փոխառությունների տրամադրման, ընդունման, հետ վերադարձման, շահաբաժնների բաշխման, ստացման, անհատույց գումարների տրամադրման, ստացման և դրամական պահանջի իրավունքի գնման գործառնությունների) նկատմամբ,

2) կիրառվում են ստացված կամ տրամադրված փոխառությունների գծով տոկոսների տեսքով վճարվող կամ ընդունվող գումարներ նկատմամբ՝ որպես ստացված կամ մատուցած ծառայությունների դիմաց վճարվող կամ ընդունվող գումարներ:

2. Հարկ վճարողի կողմից թույլ տրված խախտման դեպքերի համար վերոնշյալ օրենքի 12-րդ հոդվածով (Դրամարկղային գործառնությունների սահմանափակումները չպահպանելը) սահմանված՝ 5% կամ 10% տուգանքները կիրառվում են ստուգվող ժամանակաշրջանի ընթացքում՝

1) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման միանվագ գործարքների մասով կանխիկ դրամով վճարված գումարի օրենքով սահմանված առավելագույն չափի (300 հազար դրամ) խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

2) ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման օրենքով սահմանված առավելագույն չափերի (մանրածախ առևտուի և ծառայությունների ոլորտում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից մինչև 3,0 միլիոն դրամ, այլ դեպքերի մասով՝ 300 հազար դրամ) խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

3) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափի (3,0 միլիոն դրամ) վերոնշյալ պարզաբանմանը համապատասխան, յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվող՝ խախտման գումարների հանրագումարի նկատմամբ.

4) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափի (3,0 միլիոն դրամ) վերոնշյալ պարզաբանմանը համապատասխան, յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվող՝ խախտման գումարների հանրագումարի նկատմամբ:

3. Եթե հարկ վճարողի կողմից խախտվել են ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման միանվագ գործարքների մասով կանխիկ դրամով վճարված գումարի օրենքով սահմանված առավելագույն չափերը, ապա տվյալ ամսվա համար ապրանք-

Ների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի ամսական առավելագույն չափի խախտման գումարը որոշվում է առանց հաշվի առնելու միանվագ այս գործարքների մասով վճարած գումարները, որոնց մասով խախտվել են միանվագ գործարքների մասով օրենքով սահմանված առավելագույն չափերը:

4. | Եթե հարկ վճարողի կողմից խախտվել է ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների),

տերով սահմանված սահմանափակումները չկիրառելու բացառությունները վերաբերում են այն դեպքերին, երբ ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող և (կամ) աշխատանքներ կատարող հարկ վճարողների կողմից ընդունվող վճարումներին վերաբերող փաստաթղթերով հիմնավորվում է, որ միանվագ գործարքի մասով մինչև 3 միլիոն դրամի չափով վճարումներն ընդունվել են՝

1) մասրածախ առևտրի օբյեկտում կամ ծառայությունների մատուցման օբյեկտում՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից, կամ



ծառայությունների, աշխատանքների միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափը, ապա տվյալ ամսվա համար ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափի խախտման գումարը որոշվում է առանց հաշվի առնելու միանվագ այս գործարքների մասով ընդունված գումարները, որոնց մասով խախտվել է ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափը:

5. | Օրենքի 6-րդ հոդվածի «գ» և «դ» կե-

2) մասրածախ առևտրի կամ ծառայությունների մատուցման օբյեկտ չհանդիսացող գործունեության վայրերում՝ ֆիզիկական անձից, ինչը հիմնավորվում է քաղաքացու անունով դուրսգրված հաշվարկային փաստաթղթերով:

6. | Ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքների կատարման դիմաց ընդունվող վճարումները համարվում են անկանխիկ նաև այն դեպքում, երբ օտարված ապրանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց իրավաբանական անձանցից կամ անհատ ձեռնարկատերերից միանվագ գործարքի գծով մինչև 300 հազար դրամի չափով, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից՝ անկախ որևէ չափով ստացված կանխիկ

Վճարումները (Ներառյալ կանխավճարները) վերջիններիս անունից բանկի կամ փոստի միջոցով փոխանցվում են ապրանքն օտարող կամ ծառայությունը մատուցող հարկ վճարողի բանկային հաշվեհամարին:

7. | Վերոնշյալ օրենքի կիրառության իմաստով ապրանքների ձեռքբերման, ծառայությունների ստացման և (կամ) աշխատանքների ընդունման դիմաց վճարումներ

կատարողի համար կանխիկ վճարում չի համարվում, եթե վճարումները կատարվում են առհաշիվ անձի վճարային քարտի միջոցով՝ այդ թվում՝ այն դեպքերում, երբ առհաշիվ անձի հաշվետվության հիման վրա կազմակերպության կամ ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատիրոջ կողմից առհաշիվ անձին փոխհատուցումը կատարվել է կանխիկ վճարմամբ:

Վերոնշյալ պարզաբանման դրույթները կիրառվում են 2012թ. հունվարի 1-ից հետո իրականացված գործարքների նկատմամբ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար ընապահանական վճարի հաշվարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01 մարտի 2012թ, N 11
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (422), 02.04.2012թ.

Համառոտ նկարագիր

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ 23.05.2011թ. ՏՕ-175-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվարկված բնապահպանական վճարներից՝

1) մինչև 01.10.2011թ. ՀՀ ներմուծված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված ու պետական բյուջե վճարված և (կամ) ՀՀ մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարների պակասեցման և

2) իրացված ապրանքների արտադրությունում անմիջականորեն չօգտագործված, սակայն նույն հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ներմուծված՝ շրջակամիջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված և (կամ) ՀՀ մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարներ-

րարներին վճարված բնապահպանական վճարների պակասեցման հարցերի կարգավորման նպատակով պարզաբանմամբ նշվում է, որ.

1. | ՀՀ-ում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար 2011թ. չորրորդ եռամսյակի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների հաշվարկված բնապահպանական վճարներից պակասեցման ենթակա չեն մինչև 2011թ. հոկտեմբերի 1-ը ՀՀ ներմուծված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված ու պետական բյուջե վճարված և (կամ) մինչև 2011թ. հոկտեմբերի 1-ը ՀՀ մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարները:

2. | ՀՀ ներմուծված և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար 2011թ. չորրորդ եռամսյակի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների հաշվարկված բնապահպանական վճար-

Ներից պակասեցման Ենթակա չեն մինչև 2011թ. հոկտեմբերի 1-ը ՀՀ Ներմուծված՝ շրջակա միջավայրին վևաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված վճարները:

3. | ՀՀ-ում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վևաս պատճառող ապրանքների համար 2011թ. չորրորդ եռամյակի և դրան հաջորդող յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկված վճարներից Ենթակա են պակասեցման շրջակա միջավայրին վևաս պատճառող իրացված ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված, 2011թ. հոկտեմբերի 1-ից հետո ՀՀ Ներմուծված՝ շրջակա միջավայրին վևաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված ու պետական բյուջե վճարված և (կամ) ՀՀ մատակարարների



հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարները, բայց ոչ ավելի, քան իրացված ապրանքի համար օրենքին համապատասխան հաշվարկված բնապահպանական վճարի գումարից:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2008 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 200-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԳ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	27 մարտի 2012թ, N 83-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 11 (424), 16.04.2012թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացում Եկատարվում ՀՀ ԿԳ ՊԵԿ 25.12.2008թ. «Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման ընսությունների անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի N 02/1508 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 200-Ն հրամանում, որոնց համաձայն սահմանվում է, որ մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում տալու համար յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա ընթացքում վերադաս մաքսային մարմինը կազմակերպում է ընսություն, իսկ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ կազմակերպվում են մաքսային բնագավառը կարգավորող իրավական ակ-

տերի և մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրի ուսուցման երկշաբաթյա դասընթացներ: Ընսությունն անցկացնում է վերադաս մաքսային մարմինի դեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովը:

Ընսության անցկացման օրվա, ժամի և վայրի, նախատեսված հարցաշարի, քանությանը մասնակցելու համար ամփրաժեշտ փաստաթղթերի ընդունման ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքերում՝ ընսությունից առևվազն տասը օր առաջ, իսկ դասընթացի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ դասընթացից առևվազն մեկ ամիս առաջ:

Փաստաթուղթ	«Անհատ ձեռնարկատերերի կողմից արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակներ իրականացնելու համար վճարված արտոնագրային վճարների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարների հաշվառման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01 մարտի 2012թ, N 10
Յրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 13 (426), 15.05.2012թ.

Դամառու Նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է.

1) Եթե անհատ ձեռնարկատերը իրականացնում է թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն, ավտոտեխնսապասարկման կայանների (կետերի) գործունեություն կամ բիլիարդ խաղի կազմակերպում և բավարարում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին, ապա համարվում է կամավոր արտոնագրային վճար վճարող՝ օրենքի հավելված N 4-ով սահմանված ձևով դիմում-հայտարարությունը իր հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացնելու դեպքում:

Այդ դեպքում արտոնագրային վճարները վճարվում են, իսկ սոցիալական վճարները կարող են վճարվել միայն միանվագ կարգով՝ արտոնագրի ստանալիս (հաշվի առնելով արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը), իսկ սոցիալական վճարները վճարվում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

2) Եթե անհատ ձեռնարկատերը իրականացնում է թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն, ավտոտեխնսապասարկման կայանների (կետերի) գործունեություն կամ բիլիարդ խաղի կազմակերպում և բավարարում է Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին, սակայն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն չի ներկայացրել օրենքի հավելված N 4-ով սահմանված ձևով դիմում-հայտարարություն, ապա համարվում է պարտադիր արտոնագրային վճար վճարող:

Այդ դեպքում արտոնագրային վճարները վճարվում են միանվագ կարգով՝ արտոնագրի ստանալիս (հաշվի առնելով արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը), իսկ սոցիալական վճարները վճարվում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:



3) Եթե անհատ ձեռնարկատերը համարվում է կամավոր արտոնագրային վճար վճարող՝ թեթև մարդատար մեքենայով ուղևուափոխադրման, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության, ավտոտեխնապասարկման կայանների (կետերի) գործունեության կամ բիլիարդ խաղի կազմակերպման մասով և դադարել է բավարարել օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին, ապա այդ պահից համարվում է պարտադիր արտոնագրային վճար վճարող:

Այդ դեպքում օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին չբավարարելու ամսվա 1-ից մինչև արտոնագրում նշված ժամանակահատվածի ավարտը կատարվում է արտոնագրային վճարների և սոցիալական վճարների վերահաշվարկ՝

ա. այդ ժամանակահատվածի համար պարտադիր և կամավոր արտոնագրային վճարների դրական տարբերությունը վճարվում է մինչև օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին չբավարարելու ամսվա վերջին օրը, որի հիման վրա անհատ ձեռնարկա-

տիրոջը տրվում է օրենքի հավելված N 8-ով սահմանված ձևի արտոնագիր.

բ. Եթե կամավոր արտոնագրային վճար վճարողը չի վճարել սոցիալական վճարներ, ապա պարտադիր արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածի համար սոցիալական վճարները կատարում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդիւնուր կարգով.

գ. Եթե կամավոր արտոնագրային վճար վճարող վճարել է սոցիալական վճարներ, ապա պարտադիր արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածի համար սոցիալական վճարները կատարում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդիւնուր կարգով՝ հաշվանցելով օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին չբավարարելու ամսվա 1-ից մինչև արտոնագրում նշված ժամանակահատվածի ավարտը ներառող ժամանակաշրջանի համար միանվագ կարգով վճարած սոցիալական վճարները:

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի մայիսի 15-16-ը ապահովվել է մասնակցություն ք.Երևանում «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Սահմանային վերահսկողության և մաքսային հսկողության ձեռնարկների մշակում» թեմայով աշխատաժողովին: Հանդիպման ժամանակը նաև սահմանային պահպանության, պետական սահմանի ռեժիմի խախտումների, մաքսանենգության և հանցավորության այլ եղանակների դեմ պայքարի, ինչպես նաև սահմանային անվտանգության ամրապնդման ուղղությամբ համապատասխան գերատեսչությունների կողմից իրականացվող միջոցառումների համակարգման ոլորտում ԵՄ արդյունավետ փորձն ու մեթոդները:

Սույն թվականի մայիսի 17-18-ը ապահով-

վել է մասնակցություն «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում ք.Երևանում տեղի ունեցած «Սահմանային պահպանություն» թեմայով ազգային աշխատաժողովին: Հանդիպման ժամանակը նաև սահմանային պահպանության, պետական սահմանի ռեժիմի խախտումների, մաքսանենգության և հանցավորության այլ եղանակների դեմ պայքարի, ինչպես նաև սահմանային անվտանգության ամրապնդման ուղղությամբ համապատասխան գերատեսչությունների կողմից իրականացվող միջոցառումների համակարգման ոլորտում ԵՄ արդյունավետ փորձն ու մեթոդները:

2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.03.2012թ-ից մինչև 20.05.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԳ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 24 դիմում-գանգատ, որից՝

- բավարարվել է 15
- բավարարվել է մասնակի 1
- մերժվել է 5
- կասեցվել է 1
- կարճվել է 2 դիմում-գանգատ:

20.04.2012թ-ից մինչև 20.05.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԳ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են 14 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում 15 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

2.3 | Միջազգային համագործակցություն

2012թ. մարտի 5-9-ը ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ք.Կուտալա Լումպուրում Յամաշիարհային մաքսային կազմակերպության կողմից կազմակերպված Նորարարության և տեխնոլոգիաների 3-րդ համաժողովի աշխատանքներին: Յամաժողովի ընթացքում քննարկվել են նորարարական տեխնոլոգիաների միջոցով բիզնես գործընթացների կառավարմանը վերաբերող, սահմանների կառավարման առողջունավետ նորարարական լուծումներին վերաբերող հարցեր, օդային թեռնափոխադրումների անվտանգության ապահովման ոլորտում առկա մարտահրավերներն ու հնարավորությունները:

2012թ. ապրիլին ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի

գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ք.Սեուլում Յամաշիարհային մաքսային կազմակերպության կողմից կազմակերծված Լիազորված տնտեսվարող օպերատորների ինստիտուտին և վիրված համաժողովին: Յամաժողովի ընթացքում քննարկվել են մաքսային ծառայությունների և մասնավոր հատվածի՝ «Լիազորված տնտեսվարող օպերատորների» ինստիտուտի ներդրմանն ուղղված ջանքերը, ձեռքբերումները, հաջողություններն ու մարտահրավերները, մաքսային ծառայությունների, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և գործընկերության ուժեղացման, պետական և մասնավոր հատվածի միջև երկխոսության ամրապնդման վերաբերյալ խնդիրները:



2.4 | Ուսուցում, մրցույթ

2012թ. մարտի 27-28-ը կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոն-ների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 63 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային ծառա-

յության 26 թափուր պաշտոն:

2012թ. մարտի 27-28-ը կայացած մրցույթի արդյունքում ձևավորված հարկային ծառայության կադրերի ռեզերվից համալրվել է 3 թափուր պաշտոն:

2.5 | ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքերում կատարվող փոփոխություններ

- 1.** | Օգտագործողի համար հարմարավետ և մատչելի ինտերֆեյս, ժամանակակից չափանիշներին համապատասխան տեխնիկական և դիզայներական որակյալ լուծումներ և ցանկացած բնույթի տեղեկատվության արագ հասանելիություն:
- 2.** | Որոնման ճնշում, դասակարգված և արագագործ համակարգ:
- 3.** | Խմբավորված և դասակարգված տեղեկատվություն ըստ օգտվողների խմբերի՝ Ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռներեց, հարկային ծառայող:
- 4.** | Հարկային ծառայության կայքում նոր հզոր գործիք է հանդիսանում «Հարկային օրացույց» էլեկտրոնային ծառայությունը, որը հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռում ստանալ տեղեկատվություն հարկային պարտավորությունների՝ հարկերի, տուրքերի, վճարների վճարման և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետների վերաբերյալ: «Հարկային

օրացույց» ծառայության հնարավորությունները ավելի են ընդլայնվում «Հարկային օրացույցի ծանուցման ծառայության» միջոցով, որը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով գրանցվել և պարբերաբար ստանալ ծանուցումներ «Հարկային օրացույցում» ամփոփված տեղեկատվության վերաբերյալ:

- 5.** | Վվելացվել է հարկ վճարողի և ՊԵԿ-ի միջև անխոչընդուն կապի հաստատման հնարավորություն՝ ըստ հարկատոկի գործունեության կազմակերպա-իրավական տեսակի՝ կայքի գլխավոր էջի վերին աշ հատվածում տեղադրված «ԴԻՄԵԼ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՎՈՒԹՅԱՆԸ» բացվող մենյուի միջոցով:

- 6.** | Հաջորդ նորամուծությունը հարկային ծառայության ինտերնետային կայքի «Էլեկտրոնային ծառայություններ» բաժնի «Տևանական գործունեության տեսակների դասակարգիչ» ենթաբաժինն է, որտեղ տե-



դակայված է հստակ դասակարգված տեղեկատվություն տնտեսական գործունեության ոլորտների վերաբերյալ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի կողի և անվանման՝ փնտրման, տեսակավորման և գտման հնարավորություններով:

7. | Նորարարություն է կայքի «Օգտակար տեղեկություններ» բաժնի «Հաճախ տրվող հարցերի և պարզաբանումների շտեմարան» Ենթաբաժնում դասակարգված և որոնման կատարելագործված համակարգի իրականացումը: Ինչպես նաև ստեղծվել է նույն Ենթաբաժնի ձախ հատվածում հարցի ձևավորման և ուղարկման համար անհրաժեշտ գործիք:

8. | Հարկային ծառայության կայքում ավելացվել է նաև կայքի «Օգտակար տեղեկություններ» բաժնի «Առավել հաճախ թույլ տրվող սխալների Ելեկտրոնային շտեմարան» Ենթաբաժնը՝ իր ցանկացած դաշտի համար որոնման, տեսակավորման և գտման ձևուն համակարգի իրականացմամբ:

9. | Կայքերը համարվել են նաև հարկային և մաքսային տերմինների բառարաններով, որտեղ հակիրծ և մատչելի բնութագրվում է կիրառվող տերմինի նկարագիրը:

10. | 10Մաքսային ծառայության կայքի «Ելեկտրոնային ծառայություններ» բաժնում ներմուծվել է «Տերքին տարանցման փնտրման համակարգ» Ենթաբաժնը, որը նախատեսված է իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից վերջին 15 օրվա ընթացքում ցամաքային մաքսային սահմանով իրականացված ներմուծման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

11. | Մաքսային ծառայության կայքի գլխավոր էջի աջ հատվածում երևում է ՀՀ բոլոր ցամաքային մաքսային կետերում գրանցված վերջին 25 փոխադրման ամփոփագրերի գրանցման ժամային պարբերականությունը:

12. | «Ելեկտրոնային փոստային առաջման համակարգ» ծառայություն, որին գրանցվելով՝ օգտագործողը կարող է իր Էլ-փոստին ստանալ ՀՀ ԿՍ ՊԵԿ հարկային ծառայության և հարկային վարչարարության վերաբերյալ թարմ նորություններ: Ընդ որում

նորությունների Ելեկտրոնային առաջումն իրականացվում է այն լեզվով, ըստ որի կատարվել է գրանցումը:

13. | Ներդրվել է վերկայքերի լրահոս՝ RSS Փորմատով, որը հատկացված է կայքի նորությունների, հայտարարությունների և թարմացումների տրամադրման համար: Այս հնարավորությունը հասանելի է ինչպես համակարգչի, այնպես էլ բջջային հեռախոսների և այլ շարժական կապի միջոցների համար:

14. | Կայքերի «Հարկային օրենսդրություն», «Հարկային տեղեկատվություն», «Մաքսային տեղեկատվություն» և «Իրավախախոտներ և պատասխանատվություն» բաժինների կառուցվածքային փոփոխություն, տեղեկատվության ճշգրիտ դասակարգում՝ ըստ համապատասխան բաժինների, ինչի շնորհիվ օգտվողը կարող է իրեն անհրաժեշտ և օգտակար տեղեկատվությունը ստանալ առավել մատչելի կերպով:

15. | Կայքերի «Հարկային ծառայություն» և «Մաքսային ծառայություն» բաժիններում ավելացվել է ՀՀ ԿՍ ՊԵԿ ամբողջական կառուցվածքը նկարագրող սխեմա՝ «ՀՀ ԿՍ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ կառուցվածքը»:

16. | Մշակվել է ինտերակտիվ քարտեզ հարկային և մաքսային ծառայությունների համար, որն իրենից ներկայացնում է ինտերակտիվ միջոց՝ ըստ մարզերի ներկայացնելու համապատասխան տեղեկատվություն (ՏԵՀՏ-ՆԵՐԻ, մաքսատների և մաքսային կետերի վերաբերյալ, որտեղ ներառված են նրանց դեկավարների, հասցեների, հեռախոսների տվյալները, քարտեզի վրա տեղակայվածությունը և համապատասխան նկարները):

17. | «Լրատվական բաժնի» նյութերի դասակարգում, լրատվական որակյալ տեսանյութեր և լուսանկարներ դիտելու հնարավորություն՝ կայքի «Մեղիս կենտրոն» բաժնում, ինչպես նաև գլխավոր էջում:

18. | Հերթական նորամուծություններից է նաև կայքում գետեղված տեղեկատվությամբ կիսվելու(share) և տեղեկատվությունը այլ օգտագործողին ուղղարկելու (send

to friend) հնարավորությունը սոցիալական ցանցերում:

19. | Նախատեսված է «Ինտերակտիվ հարցման համակարգ» Էլեկտրոնային ծառայությունը, որի միջոցով հնարավոր է անցկացնել հարցումներ՝ ժամանակ առ ժամանակ տրամադրվող տարաբնույթ հարցաշարերի միջոցով՝ ըստ համապատասխան նպատակների և օգտվողի դերի: Պատասխանելով առաջարկվող հարցաշարի հարցերին հարկ վճարողը հնարավորություն կունենա արտահայտելու իր կարծիքը՝ Հարկային ծառայության գործունեության վերաբերյալ, ինչը կնպասի հարկային մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հարկ վճարողի և հարկային մարմնի միջև անմիջական կապի հաստատմանը:

20. | Նախատեսված է նաև «Հարկային ծառայության ֆորում» և «Մաքսային ծա-


ռայության ֆորում» Էլեկտրոնային ծառայությունները, որտեղ գետեղված են լինելու համապատասխանաբար հարկային և մաքսային ծառայությանը վերաբերող բազմաթիվ հարցերի շուրջ քննարկումներ, պարզաբանումներ և վերլուծություններ: Ֆորումը հնարավորություն է տալու օգտագործողներին փորձի փոխանակման և միմյանց հետ շփման՝ կարծիքների ներկայացման ու քննարկման միջոցով: Ֆորումը գտնվում է կառուցման փուլում:

21. | Նորամուծություն է հարկային ծառայության կայքի «ՀՀ հարկ վճարողների փնտրման համակարգ» Ենթաբաժինը, որը գտնվում է կառուցման փուլում: Այն հանդիսանալու է հարմար գործիք՝ ստանալու համապատասխան տեղեկատվություն հարկ վճարողների պետական գրանցման (հաշվառման) վերաբերյալ՝ մուտքագրելով ՀՎՀ (հարկ վճարողի հաշվեհամարը):

2.6 | ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Ց/Ց	Ցուցանիշ	Զափման միավոր	2012թ.		
			մարտ	հունվար-մարտ	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մարտ%)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	64,189.3	177,152.1	104.4
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	52,537.8	142,161.8	105.1
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	24,697.9	69,056.4	101.9
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	10,421.4	22,836.1	109.8
1.1.3	Եկամուտահարկ	մլն դրամ	6,822.9	20,069.9	113.9
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,169.0	5,959.2	118.9
1.1.5	Ծխախոտի պրոտարակի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,041.4	5,800.0	111.3
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,503.1	4,720.4	97.0
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	2,806.9	6,187.2	93.6
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	3,075.2	7,532.7	101.6
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,742.6	4,946.0	111.2
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	9,908.9	30,044.3	100.5
2	Արտաքին առևտորի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	188 386	483 987	116.9
2.1	Արտահանում	մլն դրամ	44 296	113 551	124.3
2.2	Ներմուծում	մլն դրամ	144 090	370 436	114.8

Ն/Ծ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ.		
			ապրիլ	հունվար- ապրիլ	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-ապրիլ %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային Եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	71,724.4	248,876.5	103.2
1.1	Հարկային Եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	60,084.7	202,246.5	103.7
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	25,923.3	94,979.7	99.9
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	18,496.6	41,332.7	112.4
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	6,874.0	26,943.9	111.8
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,885.1	7,844.3	119.1
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,247.8	7,047.8	101.7
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,173.4	5,893.8	93.0
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	2,336.6	8,523.7	88.3
1.1.8	Այլ հարկային Եկամուտներ	մլն դրամ	2,147.8	9,680.5	100.9
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,713.7	6,659.7	111.9
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	9,926.0	39,970.3	99.5
2	Վրտաքին առևտորի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	183 209	667 035	114.8
2.1	Վրտահանում	մլն դրամ	36 757	150 306	116.3
2.2	Ներմուծում	մլն դրամ	146 451	516 729	114.4



ևս մեկ քայլ՝ ԲԻՋՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՅ

Եռամսյա պարբերականությամբ հրապարակվում են
«Հարկատրոն» և «Մաքսատուրք» ամսագրերը

2.7 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Զամանակաշրջան	Զամանակաշրջան
1	Նոր գրանցված (ՀԿՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1548
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1213
1.2	Իրավաբանական անձ	հատ	335
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	5 176
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (РУ) թիվ	հատ	53
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (РУ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,041,514,629
5	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2012թ. հունվար-մարտ 1014
5.1	Բավարարված	հատ	423
5.2	Մերժված	հատ	12
5.3	Ջննության ընթացքում գտնվող	հատ	892
6	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	2255.9
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	6370
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	115.4
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	848
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	2657.5
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	21
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	400.8
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ ընչափան վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	144
10.1	Ավարտված	հատ	16
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	16
10.3	Կասեցված	հատ	15
11	Ջննության վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	417.2

Ն/Ծ	Ցուցանիշ	Զավման միավոր	2012թ. ապրիլ
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1519
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1233
1.2	Իրավաբանական անձ	հատ	286
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	5 064
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	119
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	641,022,280
5	Բնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2012թ. հունվար-ապրիլ 1314
5.1	Բավարարված	հատ	684
5.2	Մերժված	հատ	21
5.3	Թևության ընթացքում գտնվող	հատ	1147
6	Բնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	2767.8
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	8682
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	161.4
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1065
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	3556.8
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքրնության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	32
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքրնության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	420.2
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	169
10.1	Ավարտված	հատ	23
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	23
10.3	Կանցկած	հատ	21
11	Թևագործական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	588.0

ՎԱՏՎՐՈՒԹՅԱՆ ՀԵՇԱԽՈՍՔ՝

ՀԱՐԿ ՎԵՐՈՂՆԵՐԻ

ՀԵՇԱԽՈՍԱՁԱՆԳԵՐԻ

ՄՊԱՍՎՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«ԹԵԺ գԾից»՝ «Call center».

060 54 44 44